

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ,

(Հարուակութեան)

ԽԱՅ.

Օքէլեանց առհճո և նորոնց զնօղութեամբ Վարագառական Լիուարիտ Օքէլեանէ Պարուխասուան գնալը: Այս նոր Լիուարիտի հասագագութեամբ Վարույց յորութեամբ Ելիսուամը և Թաղարաց աշշասուամը: Ամբար էլիսանը: Նոր ժամապարհորդութեանը դէպէ Թաղարաց առանձին: Թաղարաց հայրածագային նէրի այս վեհանուանը: Հարուակութեամբ կամ նորութեամ առղջութեամբ և ապա առաջութեամբ: Տարայիտ Օքէլեան և նոր պրոբի: Բարելեւ էլիսանը: Ամբար առանձինութեամբ դէպէ Ամբարնը: Պէտքնէ Օքէլեան: Օքէլեան առհճի մէրդութիւն-նէրը:

Նախընթաց գլուխներից տեսանք՝ որ Վայոց ձորի հնութիւնները իւրեանց հիմնարկութեամբ կամ վերանորոգութեամբ կամ պահպանութեամբ, կամ նուիրաստացութեամբ և կամ այլ բանով՝ ըստ մեծի մասին պարտական են Սիւնեաց աշխարհի վերայ իւր ժամանակին իշխող Օքելեանց տոհմին: Այդ տահմն իւր իշխանակարութեան շրջանում տուել է մի քանի շատ նշանաւոր, պիտանի և նախանձախնդիր անդամներ հայ եկեղեցու, վանօրէից և ժողովրդի բարօրութեան համար:

Վայոց ձորի ներկայ հնութեանց մասին իսուելու միջոցին յակամայից յառաջ էր գալիս յիշեալ տոհմի մէկ կամ միւս տնդամի անունը: Սակայն պատմութեանց ծանօթ ընթերցողը դորանով չէ կարող ամփոփ գաղափար կազմել տոհմի ամբողջութեան վերայ, ուստի անհրաժեշտ է, գուցէ, կարձառօտ տեղեկութիւն տալ Օքելեան տոհմի այն անդամների մասին, որոնք գործել են Վայոց ձորում և նորա շրջակայքում:

Եւ ե՞րբ արգեօք առաւել յարմար էր նորանց վերայ իսուել եթէ ոչ այժմ՝ երբ մենք դեռ ևս Ամաղուի նորավանքում

կանգնած ենք յիշեալ տոհմի սեփական դամբարանում, ուր տեսնում ենք մեր աչքի առաջ նորանց շարեշար գերեզմանները:

Խո չեմ խօսիլ թէ ինչպէս Օրբելեանց նախնիքն ունին չինական ծագում, և գաղթել են Զինաստանից դէպի Վրաստան, ուր հայրենիք ընտրելով Սոմիսեթում — այժմեան Բորչալուի գաւառում — նշանաւոր գեր ունեցան Վրաց պատմութեան մէջ, այլ կսկսեմ այն շրջանից՝ երբ Օրբելեանք նոր հայրենիք հաստատեցին Սիւնեաց աշխարհում:

Օրբելեանների մի շառաւիղը Պարսկաստան տեղափոխուելու պատճառն էր այդ տոհմի խօպառ ջնջումն և նոցա ընդարձակ կալուածների յափշտակումն Վրաց Գէօրգի թագաւորի ձեռքով:

Երբ 1160 թուին մեռաւ Վրաց Դաւիթ թագաւորը, իշխելով միայն երկու տարի, նա մահուան անկողնի մէջ հրաւիրեց կաթուղիկոսին, իւր եղբայր Գէօրգիին, Վրաց մեծամեծներին, որոնց թւում Օրբելեան Սմբատ իշխանին և նորա որդի Իվանէին, Դնելով նրանց առաջ անշափահաս, մանուկ թագաժառանգ Դամնային, իւր միակ որդւոյն, երգմնեցրեց նորանց որ ճանաչեն Դեմնային իբրև օրինաւոր ժառանգ և չափահատ գարձած ժամանակ դարձնեն նորան պետական գահը: Խոկ պետութեան կառավարութիւնը՝ մինչև Դեմնայի մեծանալը, յանձնեց իւր եղբայր Գէօրգուն:

Սակայն ապագայում, Դեմնայի չափահասութեամբ՝ Գէօրգին ուխտադրուժ գոնուելով՝ չուզեց այլ ևս ձեռք վերցնել թագաւորական իշխանութիւնից և յենուելով կուսակիցների օգնութեան վերայ՝ զօրութեամբ դիմադրեց Դեմնայի նշանաւոր կուսակից Օրբելեան Իվանէին, որին իւր կողմնակիցներով պաշարեց Լուռու բերդում: Գէօրգի թագաւորի բռնութիւնից Իվանէին ազատելու համար՝ նորա եղբայր Լիպարիտ Օրբելեանը իւր Նլիկում և Իվանէ որդիներով հանդերձ շտապեց Պարսկաստան այնտեղի արքունիքից օգնութիւն հայցելու: Երբ պարսկական մեծաքանակ զօրքով արդէն գալիս էր Լիպարիտն

եղբօրն ազատելու, լսեց որ Գէորգի թագաւորը հրաւիրել է երդմանը և ուշ բերդից Խվանէ Օրբելեանին և երդմնազանցութեամբ հանել է նորա աշքերը, սպանել է տուել նորա կրտսեր եղբայր Քաւթարին և Սմբատ որդւոյն և ջնջել է բոլոր Օրբելեանց տունը Վրաստանում՝ կողովտելով այդ տոհմի գանձն, ինչքն և կալուածքը։ Այդ աղէտքը պատահել է 1177 թուին։

Դժբախտ Լիպարիտն իւր երկու որդիներով այնուհետեւ հարկադրուեց մնալ օտարութեան մէջ և նոր հայրենիք հաստատել Պարսկաստանում, ուր և մի քանի ժամանակ յետոյ գաւն կոկծից մեռաւ։

Նորա որդի Խվանէն գնաց Գանձակի տմիրայի մօտ և այնտեղից՝ յիշեալ Գէորգի թագաւորի դուստր հռչակաւոր Թամարի թագակալութեան օրով՝ նորից վերագարձաւ Վրաստան և ստացաւ իւր հայրենիքից միայն Օրբեթ գիւղը։ Խոկ Ելիկումն, մնալով Պարսից արքունիքում, թէպէտ մեծամեծ պատիւներ էր վայելում, սակայն վախենալով որ մի գուցէ դարձնեն նորան քրիստոնէական հաւատուից՝ խնդրեց իւրեան համար Նախիջևանի գաւառն, որ իբրև մօտ լինելով Վրաստանին, կարողանար վրէ ժինդիր լինել իւր նախնեաց սպանութեան համար։

Նա բնակութիւն հաստատեց ձահուկ գիւղում, (այժմ Զահրի) ուր ամուսնացաւ մի հայ օրիորդի հետ Խաթուն անուն։ Մի քանի ծամանակ յետոյ Ելիկումն սպանուեց պատերազմի մէջ Գանձակում, թողնելով մի մանուկ Լիպարիտ անուն։ Նախիջևանի տաճիկ մեծերից մինը բունութեամբ իւրեան կին ածեց այրի Խաթունին, տանելով նորա հետ և մանուկ Լիպարիտին։

Այդ շրջանում Թամար թագուհու իշխանութիւնը Զաքարէ և Խվանէ հայազն եղբարց ձեռքով Պարսից դէմ՝ տարածում էր Սիւնեաց աշխարհի վերայ և ահա յիշեալ իշխանները հարց և փորձով իմացան որ Վրաստանից Պարսկաստան գաղթած Լիպարիտ Օրբելեանի շառաւիղներից մնացել է միայն մի մանուկ Լիպարիտ անուն, հաղիւ տառը տարեկուն, որ իւր մօր հետ պահւում էր Նախիջևանում։

Ուրախանալով այս հանգամանքի վերայ նոքա ինչ ինչ հնար-
քով ազատում են և Խաթունին և Լիպարիաին և բնակեց-
նում են Վայոց ձորում։ Լիպարիտ մեծանալով ամուսնացաւ
Աթաբէգ Խվանէի տան գործակալ Բուպակ իշխանի Ասփայ
դստեր վերայ և շատ սիրելի եղաւ Թամար թագուհու որդի
Լաշայ թագաւորին, որի հաճութեամբ և հրամանով կարգուեց
կողմնակալ Սիւնիքի մի մասի և սեփականութիւն ստացաւ
Հրաշկաբերդն իւր գաւառով և այլ շատ գիւղեր։

Ապա Լիպարիտ կառուցեց 1223 թուին նորավանքում
Սուրբ Նախավկայի եկեղեցին, որի մասին մանրամասն խօսուեց
ԽԵ. գլխում։ Լիպարիտ ունեցաւ կարգով հինգ որդի՝ Ելիկում,
Սմբատ, Խվանէ, Փախրադուլայ և Տարսային։ Խոկ ինքը նետի
խոցելուց մեռաւ և թաղուեց Սուրբ Կարապետի դրանը, ուր
ամփոփուած էր և նորա մօր՝ Խաթունի մարմինը։ Այժմ այդ
երկու գերեզմաններն ևս անյայտ են, ըստորում անհետացած
են նոյն խոկ յիշեալ եկեղեցու աւերակները։

Հօր մահից յետոյ իշխանական իրաւունքը ժառանգեց մեծ
որդին Ելիկումն, որ փեսայցել էր Գրիգոր Մարծանեանցին,
առնելով նորա գուստը Թամիկային։ Ելիկումի օրով կատարուեց
Թաթարաց արշաւանքը Սիւնեաց աշխարհի վերայ Աոլան նոյին
զօրավարի առաջնորդութեամբ, որ պաշարեց իշխանին Հրաշ-
կաբերդում։ Առանց երկար դիմագրելոն՝ Ելիկումը գուրս ե-
կաւ բերդից, սէր հաստատեց Թաթարների հետ, իւրեան վերա-
պահեց իւր նախկին իշխանութիւնը երկրի վերայ և առաջնոր-
դեց նետողներին մինչև Անի։

Մի քանի տարի յետոյ Ելիկումը մեռաւ Աղձնեաց գաւառի
Մարտիրոսաց (Նիբրկերտ) քաղաքի պաշարման ժամանակ, ուր
գնացել էր զօրաց հետ։ Նորա մարմինը բերուեց Վայոց ձոր և
ամփոփուեց իւր հօր կառուցած սուրբ Նախավկայի գաւթում,
1253 թուին։ Նա թողեց մի որդի Բուրթել անուն, որ 1261
թուին երիտասարդ հասակում սպանուեց Հուլաւու խանի և
Էերբայ պատերազմի մէջ, որ տեղի ունեցաւ այժմեան Թերեք
գետի ափերում Վլագիկաւկազի սահմանում։

Ելքկումի վախճանից զի՞նի իշխանական իրաւունքն անցաւ նորա եղբայր Սմբատի ձեռքը: Օրբելեանի պատմութիւնը սոյն իշխանին հետեւեալ խօսքերովն է նկարագրում: «Հանձարով մեծ, խորհրդով ուժեղ, խելօք անման, հնարիւք բազմագէտ բանիւ առատ և քաղցր, լեզուաց հմուտ և ճարտար, ի գատարանի դիւանին անպարտելի, զի խօսէր լեզուս հինգ՝ հայ և վրացի, սւղուր *), և փարսի և զմուղալն իսկ: » Գալով նորա բարոյական կողմին՝ Օրբելեանը շարունակում է «վարժեալ ի մանկութենէ աստուածային պատուիրանաւն՝ էր մեծահաւատ և բարեպաշտօն, սիրող սրբոց և եկեղեցեաց, շինող վանօրէից, սփոփիչ և միսիթարիչ քահանայից, ողորմած աղքատաց, կանգնիչ և զօրացուցիչ վշտանգեալ ազգիս հայոց, գերեթափ և ազատարար ամենեցուն»:

Հայոց վանօրայք և քահանայք թաթարաց ձեռքից դառն հարկապահանջութեան տակ էին, ուստի Սմբատի գլխաւոր հոգսերից մինը եղաւ ազատել այդ նուիրական տեղերը: Ունենալով իւր ձեռքսում մի թանգագին գոհար ակն, որ ձեռք էր բերել Սոնաց (այժմեան Սուանէթի) թագաւորից, մոտադրուեց գնալ Թաթարստան, թաթարաց մեծ Մանկու զանի առաջ, որին նուիրելով յիշեալ գոհարը, խնդրէր իւր իշխանութեան ներքոյ եղած վանօրէից և հոգեսորականութեան ազատութիւն:

Այդ հերոսական ճանապարհորդութիւնը կասպից ծովի ափերի և անհուն գաշտերի անսահման և աւազուտ տարածութեան վերայ, զանազան վայրենի ազգերի միջով մինչև թաթարաց մայրաքաղաքը — Դարա - զուրում — այն ժամանակ քիչ բան չէր: Բաւական է յիշել, որ Հեթում հայոց թագաւորը նոյն քաղաքից և Մանկու զանի մօտից մինչև հայոց աշխարհ հանելը՝ 1255 թուին գործ դրեց ութ ամիս **): Բայց Սմբատ իւր բարի գիտաւորութեանց համար յանձն առաւ այդ մահու չափ գժուարութիւնն և նախապէս շրջելով վանգերը աղօթում էր

*) Թաթարաց մի այլ ցեղ:

**) Կիրակոս Ա. Գանձակեցի. գլ. Ծ. 2.

ինքն և աղօթել էր տալի հոդեորականաց իւր յաջողութեան համար և 1251 թուին ճանապարհ ընկաւ դէպի Թաթարստան։ Դժնդակ ուղին կտրելով՝ Սմբատը վերջապէս հասաւ Ղարազուրում մայրաքաղաքը, ներկայացաւ հզօր Մանկու զանին, սիրով ընդունուեց նորանից, նուիրեց նորան հրաշալի գոհարն։ և երեք տարի մնալով օտարութեան մէջ, նա վերջապէս վերադաւաւ իւր հօր հայրենիք, բերելով իւր հետ հրաման, որով նորա տոհմի վերայ հաստատում էր Սիւնեաց աշխարհի նշանաւոր մասն, ամենատեսակ հարկերից ազատում էին քահանայք, եկեղեցիք և վանօրոյք։

1^o նչ յեղաշրջումն ճակատագրի, ի՞նչ անողոք վճիռ պատմութեան։ Այն մայրաքաղաքն՝ որ ժդ դարում Զինաստանի սահմաններից հրամայում էր Միջերկրականի ափերին, այն բազմաշտարակ պալատը, որի առաջ խորին ակնածութեամբ կանգնում սպասում էին քրիստոնեայ թագաւորներն և իշխաններն ահարկու խանի երեալուն, — այժմ ներկայացնում են անբնակ, հողով և աւազով ծածկուած աւերակներ Մոնդոլիայի լայնատարած դաշտի վերայ։

Աշխարհագրական ընկերութեան անդամ Եագրոհնցելը, 1889 թուին ճանապարհորդելով Մոնդոլիայում՝ Ղարազուրում մայրաքաղաքի տեղն որոշ շելու նպատակով, նկարագրում է թէքաղաքն, որ այժմ բոլորովին անմարդաբնակ և աւերակ է, ունի $\frac{2}{3}/2$ վերստ տարածութիւն մի կողմի և 5 վերստ միւս կողմի վերայ, ուր կան ցան և ցիր աղիւաներ, խեցեղէնի բեկորներ, պատուանդանի սալեր, ջրաղացի քարեր, արձանագրութիւններ ջինական և այլ անհասկանալի գրութեամբ։ Աւերակների մէջ կայ խանի խորտակուած պալատը, որի իւրագանցիւր պատի երկարութիւնը 500 քայլ է, ուր գեռ կանգուն մնացել է մի աշտարակ՝ ութ սաժէն բարձրութեամբ։ Քաղաքի շուրջն երեւում են արհեստական առուների հետքեր, որոնցով ջուրն օրիսն գետից հոսելիս է եղել դէպի մայրաքաղաքը *):

*) Հայոց Վեճութեան, 1889, №273.

Այսպէս է անհետացել երբեմն հզօր, պատերազմական գործի հմուտ նետողաց ազգի քաղաքակրթութեան արտադրութիւնը, Ղարաղութում՝ քաղաքը:

Մի արժանի ուշադրութեան հետաքրքիր երևոյթ, որ Ղարաղութումի հետ այժմ աւերակ են դարձած գոնէ Սիւնեաց երկրի այն վանքերն, որոնք հիմնարկուած կամ նորոգած են եղել նոյն թաթարաց գերիշխանութեան պատմական շրջանում . . . :

Անցնեմ կրկին Սմբատ Օրբելեանի գործունէութեանը: Ղարաղութումից վերաբարձաւ թէ չէ, նա ներկայացաւ Մանկուղանի ներկայացուցիչ տեղական իշխանաւոր Բայլու զանին և այլ գլխաւորներին, որոնց հաճութեամբ ազատեց Որոտնի բռվանդակ գաւառը Տաթեփի վանքով, Եղեգիսը, բոլոր Վայոց ձորը, Փողահանքը, Ուրծը, Վեդին իւր ձորով և շատ գիւղեր Գեղարքունիքում և Կոտայքում (այժմ Ղըրխ Բուլաղ) և այդքան տարածութեան վանքերն, Եկեղեցիներն և հոգեորականութիւնն ազատեց Հարկերից: Ապա զբաղուեց Եկեղեցաշինութեամբ և նորանց վերանորոգութեամբ, որոց կարգում և Տաթելը, դարձնելով նորան մի մի՝ վաղուց յափշտակուած ժառանգութիւնները:

Սորանից յետոյ նա երկրորդ անգամ գնաց Թաթարստան Մանկուղանի մօտ 1256 թուին:

Հուլաւուղանը մտադրուեցաւ քաղաք կառուցանել Դառն գաշտում, որ կոչվում էր և Ալաբաղ: Նորակառոյց քաղաքի շինութեան փայտեղէն նիւթի կրելը իբրև հասարակաց հարկ դրուեցաւ թշուառ հպատակ քրիստոնեայ ժողովրդի վերայ: Կիրակս Վարդապետը զարհուրելի կերպով է նկարագրում այդ ամենածանր և դառն պարտաւորութիւնը: Հարիւր լուծեզն էին լծում մի գերանի վերայ ամէն կողմից և չէին կարողանում շարժել՝ փայտի մեծութեան և հաստութեան պատճառով: Այդպիսի ահռելի գերաններ կրում էին հեռաւոր տեղերից՝ ամենագժուար ճանապարհներով գետերի և սարերի վրայով: Նորանց թաթար վերակացուները խիստ և դառն կեր-

պով էին վարւում մարդկանց և անասնոց հետ և նորանց անխնայ ծեծելուց մեռնում՝ էին մարդիկ և անասունք *): Օրբելեանի պատմութիւնը յիշատակում է որ Սմբատ իշխանը Բասենից Տայը փայտ կրեց գէպի Դաւոն դաշտը Հուլաւու զանի համար:

Ի՞նչ կասկած որ Սմբատ իշխանը մայր փայտը բերաւ այժմեան Սողանլուի մայրածառի սքանչելի անտառից, մի երեսոյթ, որով ապացուցւում է թէ Սողանլուի հրաշագեղ ընդարձակ անտառն եղած է ոչ միայն ծովարում այլ և շատ հարիւրաւոր տարիներ առաջ, որից և Բասենի միւս մասը կոչվում էր անկայութ Բասեն:

Եթէ բարբարոս Հոլաւու զանը ստրկացած ժողովրդի կաշին մաշկելով շինեց Դաւոն դաշտում «քազմատար և բազմամարդ քաղաք տներով և ապարանքներով և մեծամեծ կռատուններով», ինչպէս ասում է Կիրակոս Վարդապետը, հապա ուր է այժմ այդ արիւնու քաղաքը, կամ ուր է նորա տեղը կամ վերջապէս ուր է նոյն իսկ Դաւոն Դաշտը կամ Ալագաղը:

Այժմ ոչ միայն յիշեալ քաղաքի հետքն անգամ յայտնի չէ, այլ և նոյն իսկ Դաւոն դաշտի տեղը վիճելի է: Հայր Ինձինեանը խճճում է յիշեալ դաշտը Դաւոնուոյ դաշտի հետ. Կարապետ վարդապետ Շահնազարեանը կարծում է լինել նորան Մարդացի ծովակի մօտ, ուր, նորա ասելով՝ Հուլաւու զանը կանգնեցրեց մեծամեծ շինութիւններ և աստղաբաշխական աշտարակ: Նոյն Շահնազարեանն ասում է որ Հայր Ալիշանը, Ուշիդէդ Դինը և այլ արարացի և պարսիկ պատմաբանները դնում են Դաւոն դաշտը այժմեան Մուղան ընդարձակ դաշտի տեղը, որ Արաքսի և Կուրի աջ ափերով սփռւում է մինչև Կասպից ծովի ափերը:

Ես որ այժմ (1890) թ. լինում եմ յիշեալ երկու գետերի ափերում, ուրեմն և Մուղանի դաշտում, ունեցել եմ միջոց մասամբ շրջագայելու Մուղանի դաշտերը, որի հարաւ արեւել-

*) Կիրակոս Վ. Դանձակեցի գլ. ԿՊ.

եան մասում տեսել եմ երեք ընդարձակ քաղաքատեղի, ծածկուած փլատակներով, բագերով, աղիւաների բեկորներով և այյն: Խրեանց նախկին անունները կորցնելով՝ նոքա հասարակօրէն այժմ կոչվում են Շհար - Գէտէ, այն է քաղաքատեղի: Վերոյիշեալ կարծիքների վերայ ներուի ինձ աւելացնել՝ որ Մուղանի հարաւ արեւելեան մասն, ուր զետեղուած են աւերակ շհար - Գէտէները, այժմ կոչւում է Աջի, այն է Դառն: Մի գուցէ սոյն Աջի կոչումը կար նաև թաթարաց ժամանակ, որից հայերը բաւացի թարգմանութեամբ անուանել են Դառն:

Դառնամ կրկին Սմբատ իշխանին: Սա զրկուեց իւր եղբայր Կվանէից, որ թողեց մի զաւակ Լիպարիտ անուն: Ապա զըրկուեց միւս եղբօրից՝ Փախրադուլյայից: Մնաց նորան օգնական միայն կրտսեր եղբայր Տարսայինը:

Սմբատն ամուսնացած էր Ռուզուքան օրիորդի հետ, ինչպէս երեսում է Քարկոփայ վանքի արձանագրութիւնից: Բայց նա այս ամուսնութիւնից չունեցաւ զաւակ, ուստի որդեգրեց իւր եղբօրորդի Ստեփաննոսին, զարգացրեց նորան կրթութեան և ուսման մէջ և որը յետոյ կոչվեց քահանայութեան և մետրոպոլութեան, ինչպէս խօսուեց նախընթաց գլխում: Դաւրիժում վախճանուած 1273 թուին Սմբատի մարմինը եկեղեցական մեծահանդէս ծիսակատարութեամբ բերուեց Վայոց Ճոր և ամփոփուեց Նորավանքում, տոհմային դամբարանում:

Սմբատի մահից յետոյ նորա բոլոր երկրներին տիրեց կրթսեր եղբայր Տարսայինը, որի մասին իւր պատմաբան որդին ասում է էր այր զօրեղ և պատերազմող և յաջողակ յամենայն գործու, նաև բարեպաշտ և առողութառէր յոյժ: Արուզ Խաթունի հետ ամուսնացած և սորտ կենդանութեան օրով՝ Տարսային անհրաժեշտ համարեց ունենալ երկրորդ կին և ամուսնացաւ Խաչենու Զալալ իշխանի դուստր Մինա խաթունի հետ: Վերջինիս ուղելու համար Տարսայինը խնամախօս տարաւ իւր հետ Խաչէն գաւառը՝ հւմ, Վրաց Դաւիթ թագաւորին որ նոյնպէս երկու կնոջ ամուսին էր

ինչ և իցէ, Տարսային առաջին կնոջից ունեցաւ երեք զաւակ՝ Նլիկում, Ստեփաննոս և Գախրադուլայ, իսկ Մինա խաթունից՝ Զալալ և Երկու գուստոր՝ մեծն ամուսնացաւ Խաչենու Դուփենց Գրիգոր իշխանի հետ և կոչւում էր Ասփայ, որպէս Երեսում է նոյն Գրիգորի արձանագրութիւնից Սմբատ իշխանի դամբարանի պատի վերայ։ Իսկ կրտսերը, Սամբան, ամուսնացաւ Վրաց Դեմետորէ թագաւորի Երկրորդ որդու՝ Մանուէլի հետ։

Տարսայինը խոհեմութեամբ կառավարում էր իւր Երկիրը, շատ նուերներ արաւ եկեղեցիներին, վանքերին. կամուրջ շինեց գետի վերայ Արփայ գիւղի մօտ, Սիւնեաց մետրոպոլիտ ձեռնադրել տուաւ իւր որդուն և 1290 թուին մեռաւ Արփայ գիւղում, իւր սեփական դարպասում և ամիոփիուեց նորավանքում։ Զոր, Կարմրագոյն կաւահողի մէջ թաղուած Տարսայինի ոսկերոտիքը վէց հարէր տարու ընթացքում այնքան թարմ և անփուտ պահուել է, որ նորա ոտի փոքր ոլոգն այժմ իսկ դրած է տողերիո գրողի սեղանի վերայ։

Տարսայինի մահից յիտոյ ժառանգութեան վէճ ծագեց նորա որդիների մէջ, ուստի թաթար իշխանների միջամտութեամբ իշխան Հրատարակուեց մեծ որդին՝ Նլիկումն։ Բայց խաղաղուէր Նլիկումը չուզեց օգուտ քաղել իւր իրաւունքից, այլ եպիսկոպոսների, վարդապետների և ազատների ներկայութեամբ բաժանեց հայրենական Երկիրը իւր, եղբօր Զալալի և Հօրեղբօրդի Լիպարիտի մէջ։ որ և սիրով և խաղաղութեամբ շարունակում էին իւրեանց իշխանավարութիւնը։ Այս Լիպարիտն ունեցաւ հինգ որդի՝ Սմբատ, Յոհաննէս մետրոպոլիտ, որ յաջորդեց Ստեփաննոսին, իսկ մնացեալ Երեք որդիների անունն անյայտ։ Սոյն Նլիկումի և Լիպարիտի ստորագրութեամբ ուղարկուեց թուզի Անաւարզայ Գրիգոր հայոց կաթուղիկոսին։ (գլ. ԽԶ.)։

Նլիկում իշխանն ամուսնացած էր Թամթա խաթունի հետ, ինչպէս ցոյց է տալի սոյն տիկնոջ շիրմաքարի և մի այլ խաչքարի արձանագրութիւնը։ Սոցա որդիներից Բուրթելն իշխան

Հօր ժառանգութեան վերայ, Բուղդան մեռաւ, իսկ գուստը Մամախաթունը ամուսնացաւ Պռօշ իշխանի թոռն՝ Էաջու հետ:

Արձանագրութիւններից յայտնուում է որ Բուրբել իշխանը, ամուսին Վախափիը և երկու զաւակունք՝ Բէշքէն և Խվանէ կառուցին Նորավանքում մի հպակապ տաճար, այժմ աւերակ: Առ հասարակ պատմութիւնն այս իշխանների մասին ոչինչ չէ յիշատակում:

Բուրբելի թոռն՝ Խվանէի որդի Սմբատ իշխանը որ բռնակալ Լանկթամուրի օրով աիրում էր Սիւնեաց երկրի մի մասին, Լանկթամուրի զօրապետ Օմարից բռնադատուած՝ ուրացաւ քրիստոնէութիւնն և իւր ընտանիքով հանդերձ ուղարկուեկաւ Սմբանդ քաղաքը: Բայց մի քանի ժամանակից յետոյ ցրկին վերադարձաւ Սիւնիք և կրկին խոստովանեց քրիստոնէութիւնն: Նորա հետ ուրացաւ և նորա եղբայր Բուրբելն՝ 1421 թուրին, բայց կրկին զզջալով մեռաւ քրիստոնէական հաւատի մէջ, ինչպէս ասում է Հայր Զամշեանը:

Սմբատի մահից յետոյ իշխեց նորա որդի Պելգինէ, որ խելօք և բազմահանճար մարդ լինելով վարուում էր իմաստութեամբ այլազգի իշխանների հետ և խաղաղութեամբ կառավարում էր իւր գաւառը: Ստկայն պատուական և ականաւոր մարդն իւր փեսայի՛ Վրաց Ալէքսանդր թագաւորի գաւադրութեամբ, մի հայի Ճեռքով թունաւորուեց և մեռաւ 1438 թուրին: Նորա մարմինը ամփոփուեց իւր հօր Սմբատի և եղբօր Ստեփանոսի գերեզմանների մօտ, որ Ստաթևի եպիսկոպոս էր:

Պելգինէի մահը սուգ եղաւ բոլոր ազգին, ըստ որում երեւլի իշխաններից միայն նա էր մնացել, միւսներն անհշան մարդիկ էին:

Եւ այսպէս, Օրբելեան տոհմը՝ պատմութեանը յայտնի շըրջանում, Լիսլարիտ առաջինից մինչև Պելգինէ, 1049, մինչև 1438 թուականն, այն է 389 տարու ընթացքում՝ տուեց, ինչ պէս վերը տեսանք, շտանշանաւոր անձինք հայութեան և հակեղեցուն ջատագով:

Անկասկած՝ Սիւնիքում երեւի այժմ ևս կան անյայտութեան մէջ շատ գերդաստաններ սերուած Օրբելեան տոհմից:

Օրբելեան տոհմի աստիճանաբար աճումն դիւրըմբոնելի անելու համար աւելորդ չեմ համարում ի վերջոյ դնել նորանց տոհմական ճիւղագրութիւնը կազմած պատմութիւնից և արձանագրութիւններից: